Հավելված 4
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2017 թվականի
հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատական կարգադրիչների 2017թ. վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է դատական կարգադրիչների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը վարքաբանության, առաջին բուժական և հոգեբանական օգնության, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ոլորտներում:

4. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ու հատուկ ուսուցումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը:

5. Վերապատրաստման և հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2017 թվականի մայիս-հուլիս ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	B-G-015-17	Դատական կարգադրիչների վարքաբանություն	12
2.	B-G-016-17	Առաջին բուժական և հոգեբանական օգնություն	8
3.	B-S-001-17	Հրազենի գործադրման հմտություններ	4
4.	B-S-002-17	Հատուկ միջոցների գործադրման հմտություններ	6

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. B-G-015-17. Դատական կարգադրիչների վարքաբանություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայողական վարքագծի կանոնները, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-016-17 դասընթացի հետ միասնական քննությամբ:

2. B-G-016-17. Առաջին բուժական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ B-G-015-17 դասընթացի հետ միասնական քննությամբ:

3. B-S-001-17. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական կարգադրիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

4. B-S-002-17. Հատուկ միջոցների գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտություններ ձևավորելու համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով: